Տպագիր ամփոփագրի պայմանները կարող են փոփոխված լինել. Տպագիր ամփոփագրի պայմանները կայքում հրապարակված գործող պայմաններից տարբերվելու դեպքում անհրաժեշտ է դիմել մասնաճյուղ կամ առաջնորդվել կայքում առկա տարբերակով: Ամբողջական պայմանները՝ https://www.ardshinbank.am/content/անշարժ-գույքի-գրավադրմամբ-ապահովված-էքսպրես-վարկեր հղմամբ:

Անշարժ գույքի գրավով ապահովված «Էքսպրես» սպառողական վարկերի վերաֆինանսավորում

Վարկի արժույթ	ՀՀ դրամ	
Հայտի և փաստաթղթերի ընդունման վայր	Բանկի մասնաճյուղեր, Հաճախորդների սպասարկման վարչություն	
Վարկի նպատակ	Վարկառուի և այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց(այդ թվում՝ ԱՁ)՝ ՀՀ Բանկերում և վարկային կազմակերպություններում (բացառությամբ «Արդշինբանկ» ՓԲԸ) առկա վարկային պարտավորությունների վերաֆինանսավորում	
Վարկի գումար	1 500 000 - 150 000 000 ՀՀ դրամ	
Տոկոսադրույքի տեսակը	Հաստատուն	Լողացող[1]
Տարեկան անվանական տոկոսադրույք	16% - 16.5%	ՀԴ+4.5% - ՀԴ+5%
Տարեկան փաստացի տոկոսադրույք	15.50% - 20.64%	
Վարկի ժամկետ	5 - 15 տարի	
Վարկ/Գրավ առավելագույն հարաբերակցություն	80%	
Վարկային հայտի ուսումնասիրության վճար	Չի սահմանվում	
Գրավի ձևակերպման վճար	Իրականացվում է Բանկի միջոցներով	
Ապահովագրություն[2]	Համաձայն ապահովագրական ընկերության սակագնի	
Անշարժ գույքի գնահատում	Իրականացվում է հաճախորդի կողմից՝ Համաձայն Բանկի հետ համագործակցող անկախ գնահատող ընկերությունների[3] սակագնի	
Միասնական տեղեկանքի ստացում	Իրականացվում է հաճախորդի կողմից՝ Համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից սահմանած սակագնի	
Պայմանագրերի նոտարական վավերացում	Իրականացվում է հաճախորդի կողմից՝ Համաձայն նոտարական վավերացման համար սահմանված վճարների	
Վարկի և տոկոսագումարի մարումներ	Ամենամսյա հավասարաչափ մարումներ (անուիտետ)	
Վարկի տրամադրման եղանակ	Անկանխիկ՝ բանկային հաշվի միջոցով	
Բանկային հաշվի բացում	Համաձայն Բանկի սակագների https://www.ardshinbank.am/content/բանկային-հաշիվ	
Վարկի գումարի կանխիկացում	Համաձայն Բանկի սակագների https://www.ardshinbank.am/content/բանկային-հաշիվ	
Քաղվածքների տրամադրում	Համաձայն Բանկի սակագների https://www.ardshinbank.am/content/բանկային-հաշիվ	

Վերաֆինանսավորվող վարկին ներկայացվող պահանջներ

Այլ ֆին. կազմակերպությունում վերաֆինանսավորվող վարկային պարտավորության սպասարկման նախապայմաններ	1. Նվազագույնը 1 տարվա սպասարկման պատմություն, 2. Վարկի գծով կատարվել է առնվազն 5% մայր գումարի մարում, և վերջին 1 տարվա ընթացքում տվյալ վարկի գծով ժամկետանց օրերի քանակը չի գերազանցում 30-ը, 3. Վերաֆինանսավորվող պարտավորության մեջ անշարժ գույքի գրավով ապահովված վարկի տեսակարար կշիռը պետք է կազմի առնվազն 50%՝ անկախ արժույթից,

	4. Վարկը տրամադրելուց հետո 15-օրյա ժամկետում բանկին ներկայացնել Կադաստրի կոմիտեից ստացված առաջնային գրավի դադարեցման վերաբերյալ տեղեկանք:
Վարկառուին/ամուսնուն և գրավատուներին ներկայացվող պահանջներ	
Վարկառու	21 տարին լրացած ՀՀ-ում կամ ԱՀ-ում բնակվող ֆիզիկական անձ, ում տարիքը մինչև վարկի մարումը չի գերազանցում 70 տարին ներառյալ (մինչև 71 տարեկանը լրանալը):
Գրավատու	1. Վարկառու կամ նրա ամուսին 2.Վարկառուից և/կամ նրա ամուսնուց բացի այլ չափահաս ֆիզիկական անձ, որի նկատմամբ սահմանափակում չկա և գրավադրվող գույքի սեփականության իրավունքը ծագել է վարկային հայտի ներկայացման ամսաթվից առնվազն 3 ամիս առաջ:
Վարկառուին, վերջինիս ամուսնուն, գրավատուներին ներկայացվող այլ պարտադիր պահանջներ	1. Հայտի դիտարկման պահին Ժամկետանց կամ դասակարգված վարկի կամ երաշխավորության բացակայություն (ամուսնու և գրավատուի վարկարժանության ստուգում չի իրականացվում) 2. Բջջային հեռախոսահամարի և էլ. Փոստի հասցեի առկայություն
Գրավի առարկային ներկայացվող պահանջներ	
Ապահովվածություն	Բնակելի և հասարակական նշանակության անշարժ գույք, ընդ որում մեկ վարկի ապահովություն կարող է հանդես գալ 1 գրավ
Գույքի հասցե	Համաձայն Բանկի Բնակավայրերի գոտիավորման ցանկի՝ 1-ին, 2-րդ գոտում ընդգրված հասցեները, ինչպես նաև 3-րդ գոտում ընդգրկված հասցեները:
Գրավադրվող անշարժ գույքին ներկայացվող պահանջներ	➢ Անշարժ գույքը պետք է ունենա քարե, պանելային կամ երկաթբետոնե կառուցվածք (բացառությամբ միջնապատերի և միջհարկային ծածկերի): Անշարժ գույքը պետք է ունենա 80% և ավելի ավարտվածության աստիճան: Առավելագույնը լինի առանց ներքին հարդարման աշխատանքների (ներքին բաժանումներն արված, սվաղված): Գրավի առարկա չեն կարող հանդիսանալ փաստացի կիսակառույց, անավարտ, կիսաքանդ գույքերը: ➢ Բնակելի անշարժ գույքը պետք է ապահովված լինի անհրաժեշտ կոմունիկացիաներով (մոնտաժված լինեն ջրագիծ, հոսանքի լարեր) ➢ Անշարժ գույքը չպետք է լինի հասարակական կացարան կամ գտնվի մեկ այլ շինության՝ նախկին հանրակացարանի կամ հյուրանոցի տարածքում այլ հասարակական կամ վարչական, արտադրական շենքի տարածքում, չլինի ավտոտնակ, ավտոկայանտեղ, ավտոհանգրվան: ➢ Եթե անշարժ գույքի կազմում առկա են ինքնակամ շինություններ, որոնք հանդիսանում են գրավադրվող գույքի անբաժանելի մասը (հանդիսանում են մեկը մյուսի շարունակությունը), ապա դրանց բացակայությունը (քանդման դեպքում) որևէ կերպ չպետք է փոփոխի գրավի նպատակային նշանակությունը, գրավչությունը: Ինքնակամ շինությունները չեն կարող հանդիսանալ գրավի առարկա: Գրավի առարկա չի կարող հանդիսանալ այն անշարժ գույքը, որի ինքնակամ տարածքը գերազանցում է օրինական տարածքի 50%-ը: ➢ Անշարժ գույքը չպետք է գտնվի 3-րդ և ավելի աստիճանի վթարային շենքում կամ ունենա 3-րդից ավել վթարայնության աստիճան ➢ Անշարժ գույքի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքը օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է գրացված լինի լիազոր պետական մարմնում

	➢ Եթե գրավի կազմում առկա է հողամաս, ապա հողի կադաստրային արժեքի գծով պարտքի բացակայություն ➢ Գրավի ընդհանուր արժեքում շինության արժեքը 1-ին գոտում պետք է կազմի նվազագույնը 30%, 2-րդ գոտում նվազագույնը 40%, 3-րդ գոտում նվազագույնը 50%, 4-րդ գոտում 60% ➢ Եթե անշարժ գույքը պատկանում է ֆիզիկական անձանց ընդհանուր համատեղ կամ/և բանժնային սեփականության իրավունքով, ապա գրավ են հանդիսանում բոլոր բաժնեմասերը միաժամանակ, իսկ գրավատու են հանդիսանում գրավի բոլոր համասեփականատերերը, ➢ Անշարժ գույքի միջհարկային ծածկի՝ առաստաղի բարձրությունը չպետք է պակաս լինի 2.5 մ –ից, ➢ Բնակելի անշարժ գույքը չպետք է լինի ցոկոլային, նկուղային, կիսանկուղային, տեխնիկական, մանսարդային հարկերում, ձեղնահարկում:Գրավի առարկա չեն կարող լինել այն բնակելի տները,որոնցում նշված հարկերից որևէ մեկի մակերեսը գերազանցում է տան ընդհանուր մակերեսի կեսը, ➢ Գրավի առարկա չեն կարող լինել այն գույքերը, որոնք մեկ այլ գույքային միավորի հետ ունեն ընդհանուր տարածք, բնակելի տան հողամասը (կամ դրա մի մասը) սեփականատիրոջը պատկանում է վարձակալության իրավունքով, անհատույց օգտագործմամբ կամ սերվիտուտով, ➢ Գրավի առարկա չեն կարող լինել այն բնակելի տները, որոնք ունեն 2 և ավել ընդհանուր պատեր այլ սեփականատերերի գույքերի հետ, ➢ Գրավի առարկա չի կարող հանդիսանալ այն անշարժ գույքը, որի մի մասը դատարանի որոշմամբ տրամադրված է անհատույց օգտագործման, ➢ Եթե գրավադրվող անշարժ գույքը առանձնատուն է, ապա այն գրավադրվում է ամբողջությամբ, ➢ Անշարժ գույքը չպետք է գտնվի գերակա հանրային շահ հայտարարված տարածքում:
Ապահովագրությանը ներկայացվող պահանջներ	
Գրավի առարկայի ապահովագրություն՝ մեկ տարվա համար	1. Վարկային պայմանագրի համաձայն պայմանագրային գումարի չափով 2. Ապահովագրության պայմանագրով պետք է ծածկվեն առնվազն հետևյալ դեպքերից առաջացող վնասները, որոնք հետևանք են՝ ➢ Հրդեհի, կայծակի հարվածի, պայթյունի (Կենցաղային և արդյունաբերական նպատակների համար օգտագործվող գազի, գլորշու կասաների, գազապահեստարանների, գազամուղ խողովակների, ճնշման տակ աշխատող անոթների և այլ նմանատիպ սարքավորումների, ինչպես նաև պայթուցիկ նյութերի) հետևանքով առաջ եկած ռիսկերի, ➢ Օդաչուի կողմից ղեկավարվող թռչող սարքի ընկնումից կամ դրա հետ բախումից, ինչպես նաև դրա մասերի կամ բեռի ընկնելու հետևանքով առաջ եկած ռիսկերի, ➢ Փոթորիկի, կարկուտի, ջրհեղեղի, ➢ Հրաբխի ժայթքման, գետնի նստվածքի,սողանքների, փլուզումների, ձյան զանգվածակույտի, ➢ Ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու և համանման այլ

	համակարգերի ջրի պատճառած վնասների, ցայտաջրմուղային համակարգերի և ջրաքաշ խողովակների ջրի պատճառած ռիսկերի, ➢ Կոտրանքի միջոցով գողությունից, կողոպուտից, ավազակությունից, ապահովագրված գույքի վնասմանն ուղղված երրորդ անձանց կանխամտածված գործողությունների, տրանսպորտայինմիջոցների վրաերթի, ծխի ազդեցության և ձայնային հարվածի ռիսկերի, ➢ Ապակիների, հայելիների և ցուցափեղկերի կոտրումից, արտաքին ազդեցության այլ ռիսկերի՝ բացառությամբ ապահովագրության կանոններով նշված բացառությունների:
Վարկառուի ապահովագրություն՝ մեկ տարվա համար	Ապահովագրվում է դժբախտ պատահարի արդյունքում կյանքից զրկվելու դեպքից և մշտական աշխատունակության կորստից պայմանագրի համաձայն վարկային սահմանաչափի չափով
Վարկառուի կողմից վարկային պարտավորության չկատարման դեպքում կիրառվող տույժեր և տուգանքներ	
ժամկետանց վարկի գումարի գծով տարեկան տոկոսներ	24%
ժամկետանց տոկոսագումարների գծով	48%
Վարկի գումարի ամբողջությամբ կամ մասնակի վաղաժամկետ մարման դեպքում	Չի սահմանվում
Որոշման կայացման ժամկետներ և գործոններ	
Նախնական որոշման կայացման ժամկետ	Հայտի մուտքագրման պահին
Վերջնական որոշման կայացման ժամկետ	3 աշխատանքային օր
Որոշման վավերականության ժամկետ	25 աշխատանքային օր
Տրամադրման ժամկետ	1 աշխատանքային օր՝ գրավի պայմանագիրը նոտարական վավերացում և գրավը կադաստրային գրանցում ստանալուց հետո
Դրական որոշման գործոններ	Հաճախորդի/ամուսնու և գրավատուների վարկարժանության և գրավադրվող գույքի համապատասխանություն Բանկի կողմից սահմանված պահանջներին
Վարկի մերժման գործոններ	Հաճախորդի/ամուսնու և գրավատուների վարկարժանության և/կամ գրավադրվող գույքի անհամապատասխանություն Բանկի կողմից սահմանված պահանջներին

[1] Լողացող տոկոսադրույքի դեպքում վարկի տոկոսադրույքը որոշվում է հաշվարկային դրույքին (ՀԴ) գումարելով հաստատուն բաղադրիչ: Հաշվարկային դրույքը Բանկի կողմից վերանայվում է յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ին և օգոստոսի 1-ին: Տրամադրված վարկերի տոկոսադրույքները Բանկի կողմից կարող են միակողմանիորեն վերանայվել ՀԴ փոփոխության և այդ մասին հաճախորդին իրազեկելուց 7 աշխատանքային օր հետո (եթե ծանուցման մեջ ավելի երկար ամսաթիվ սահմանված չէ):

Հաշվարկային դրույքի (ՀԴ) սահմանման աղյուսակ՝

ժամանակահատված	*17.03.2021թ.-ից հետո ընդունված հայտերի համար*	Գործում է մինչև 17.03.2021թ-ը ընդունված հայտերի համար
Գործող	**9.5%**	**12.0%**
01.02.2022-07.08.2022թթ.	*8.5%*	*10.5%*
03.08.2021-31.01.2022թթ.	*7%*	*10%*
01.02.2021-02.08.2021թթ.	*6%*	*8.25%*

[2] Եթե վարկառուն դիմումի համաձայն չի ցանկանում կատարել ապահովագրություն, ապա տոկոսադրույքը սահմանվում է

0.5 տոկոսային կետով բարձր: Ապահովագրությունը կատարվում է վարկի տրամադրման առաջին տարվա համար և որպես շահառու հանդես է գալիս վարկառուն:

[3]Վերաֆինանսավորվող վարկերի դեպքում գնահատում չեն պահանջում այն գույքերը, որոնք համապատասխանում են հետևյալ պայմաններին՝

ա.Գրավադրվող գույքը պետք է լինի բազմաբնակարան շենքի բնակարան և համապատասխանի Բանկի կողմից գրավադրվող անշարժ գույքին ներկայացվող պահանջներին,

բ.Բնակարանը գտնվի սահմանված առաջին և երկրորդ գոտիներում (գոտիները ըստ ՀԱՎԵԼՎԱԾ 1-ի /բացառությամբ 2-րդ գոտու գյուղական համայնքների/),

գ.Նոր տրամադրվող վարկի գումարը չգերազանցի 1-ին գոտում 25մլն. ՀՀ դրամը, երկրորդ գոտում՝ 15 մլն. ՀՀ դրամը և ավելի մեծ չլինի քան նախորդ /վերաֆինանսավորվող/ վարկի 120%-ը և նախորդ գնահատված շուկայական արժեքի 60%-ը,

դ.Նախորդ գնահատումը, որով իրականացվել է վարկավորում այլ Ֆինանսական ընկերությունում իրականացվել է ոչ շուտ, քան վարկի դիմումը Բանկ ներկայացնելու օրվանից 3 տարի առաջ:

Բանկի հետ համագործակցող գրավի անկախ գնահատող ընկերությունների ցանկ՝

ԳՐԱՎԱԴՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ԲԱՑԱՌԱՊԵՍ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ԱՆԿԱԽ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ: *Ստորև գնահատող կազմակերպությունների ցանկը*

Կազմակերպություն	Հասցե / կայքէջ	Հեռախոսահամար	Էլ. հասցե / հաշվեհամար
«Օրրան» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 4, 5-րդ հարկ www.orranv.am	010520452, 098204898, 091750809, 095750809	orranv@mail.ru h/h 2470103446760000
«Օֆման Մորգիդջ Քոնսալթինգ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Եզ. Կողբացի 42-37,	010537179, 043537179	ofmanmc@mail.ru h/h 2474401231870000
«ՎԻ ԷՄ- ԱՐ ՓԻ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց, փակուղի 8, 209 սենյակ,	010588797, 043588797	vm-rp@mail.ru h/h 2470103730630000
«Ֆինլոու» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 50-3 տ.	010506000, 091911155, 060747400	finlaw@inbox.ru h/h 2474602078940000
«Ինեքս» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Օրբելի եղբայրներ 45/403	055518115, 077518116, 041042287	apresyan.expert@mail.ru h/h 2471707893480000

Կարևոր է իմանալ

Վարկառուն իրավունք ունի ժամկետից շուտ ամբողջական կամ մասնակի կատարել (մարել) պայմանագրով ունեցած պարտավորությունները, որի դեպքում վճարվող գումարի չափով կնվազեցվի վարկի մայր գումարը, համամասնորեն կնվազեցվի վարկառուի կրեդիտավորման ընդհանուր ծախսը. Տվյալ դեպքում կրեդիտավորման ընդհանուր ծախսից նվազեցման ենթակա են վարկի մայր գումարի մնացորդի նկատմամբ հաշվեգրվող տոկոսագումարը, վարկի մայր գումարի մնացորդի նկատմամբ հաշվեգրվող սպասարկման վճարը: ընդ որում՝ սույն կետով նախատեսված իր իրավունքն իրականացնելու դեպքում բանկը չի կարող կիրառել պատասխանատվության միջոցներ:

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

Ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում մարումները կատարվում են հետևյալ հերթականությամբ՝ սահմանված կարգով գրավադրված գույքի բռնագանձման հետ կապված Բանկի կողմից կատարված ծախսերը և վարկային պայմանագրերի շրջանակներում ձևավորված Բանկի նկատմամբ Վարկառուի և/կամ Համավարկառուի այլ դեբիտորական պարտավորությունները,ժամկետանց տոկոսի վրա հաշվարկված (կուտակված) տուժանքի գումար, ժամկետանց Վարկի

վրա հաշվարկված (կուտակված) տոկոսագումար, հաշվարկված (կուտակված), սակայն չվճարված ժամկետանց տոկոսագումար, ժամկետանց Վարկի գումարը, վարկի սպասարկման վճարը, Վարկի օգտագործման համար հաշվարկված (կուտակված) ժամկետային տոկոսագումարը, Վարկի գումարը: Դրամական պարտավորությունների կատարման հերթականությունը կարող է փոխվել Բանկի հայեցողությամբ՝ առանց Վարկառուին և/կամ Համավարկառուին տեղեկացնելու:
Վարկառուն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու վարկավորման պայմանագիրը դրա կնքմանը հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում, եթե վարկավորման պայմանագրով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ (մտածելու ժամանակ): Այդ դեպքում վարկառուն պարտավոր է վարկի գումարը օգտագործելու համար Բանկին վճարել տոկոսներ, որոնք հաշվարկվում են վարկավորման պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան: Վարկավորման պայմանագրի լուծման հետ կապված որևէ այլ հատուցում վարկառուից Բանկը չի կարող պահանջել:
Բանկի Մոբայլ Բանկինգ հավելվածի միջոցով հնարավոր է իրականացնել դրամային փոխանցումներ, կատարել վարկի մարումներ, դիտել հաշիվների մնացորդներն ու գործարքները, կատարել վճարումներ և բազմաթիվ այլ գործարքներ, որոնց կարող եք ծանոթանալ https://www.ardshinbank.am/content/մոբայլ-բանկինգ հղմամբ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝

Ձեր գույքը կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, եթե դուք ժամանակին չկատարեք ձերտոկոսագումարների եվ վարկի գումարի մարումները:

Ձեր կողմից պարտավորությունը չկատարելու կամ թերի կատարելու դեպքում վարկատուն 3 աշխատանքային օր հետո այդ տվյալները ուղարկում է վարկային բյուրո, որտեղ ձևավորվում է Ձեր վարկային պատմությունը: Դուք իրավունք ունեք վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել Ձեր վարկային պատմությունը:

Վատ վարկային պատմությունը կարող է խոչընդոտել Ձեզ՝ ապագայում վարկ ստանալու ժամանակ: ՀՀ ֆինանսական կազմակերպությունները վերահսկվում են ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից: